

## ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

«Մոգգառւրի» ամսագիրը նոր ծրագրով:—Նրա մի յօդուածը հայերի մասին:—Գիւղական քահանաների ազգեցութիւնը ժողովրդի վրայ:—«Գրագլտութիւն տարածող» ընկերութիւնը:—Վրաց հասարակաց կարծիքը Վելչկօի մասին:—Ժողովրդական գրականութիւն:—Մի գիրք վրացի-կաթոլիկների մասին:

Վրացիք ունեն ներկայումս բացի հասարակական-քաղաքական «Մոամբէ»-ից՝ նաև երկու ուրիշ ամսագիր, որոնք մասնաւոր բնաւորութիւն ունեն: Դրանք են՝ «Զեջլիի» (Արտ) և «Մոգգառւրի» (Ճանապարհորդ): Առաջինը զուտ մանկական հրատարակութիւն է, իսկ երկրորդը, որ իր հիմնուելու տարին՝ 1901-ին՝ բացառապէս ազգագրական ծրագիր ունէր, այժմ բոլորովին կերպարանափոխ է եղել: Յաջողութիւն չը գտնելով բաժանորդագրութեան կողմից իր սկզբնական ձեռք՝ «Մոգգառւրին» հիմնական փոփոխութեան ենթարկեց իր ծրագիրը և անցեալ տարուանից նա լոյս է տեսնում հետևեալ 5 որոշ բաժիններով. մանկավարժութիւն, գիւղատնտեսութիւն, բժշկութիւն, պատմութիւն և աշխարհագրութիւն: Սյդ բոլոր հիւղերից նա տալիս է ընդարձակ, հանգամմանօրէն գրուած և պատկերացրդ, հանրամատչելի յօդուածներ: Պատմական-աշխարհագրական բաժինը վերաբերում է հայրենի աշխարհին և գետեղուում է ամսագրի վարջում՝ երեսների առանձին հաշով: Գիւղական յօդուածների մեծ մասը թարգմանութիւն են կամ քաղուածք ուու և եւրոպացի հեղինակներից և ըստ վկայութեան «Մոգգառւրի»-ի այլեալ ընթերցողների՝ հետաքրքիր և լուրջ նիւթ են մատակարարում գաւառներում ապրող վրացի ինտելիգենտներին: Շատ գոհ են նրանից մանաւանդ գիւղական ուսուցիչները, որոնք գրում են, թէ ամսագրից սովորած գիւղական տեղեկութիւնները՝ մանաւանդ գործնական կեանքին վե-

րաբերեալները՝ նրանք անմիջապէս սովորացնում են իրանց աշակերտներին և չըջապատող գիւղացիներին։ Եւ պէտք է խոռոշովանած, որ այդ գործնական մասի վրայ դարձնուում է խմբագրութեան կողմից շատ մեծ ուշադրութիւն։

Սակայն «Մոգղառուում» չէ յաջողուում յաղթել հասարակութեան անտարբերութեամը իր այդ նոր ծրագրով էլ. ամսագիրը լին է տեսնում մեծ մասամբ միտոցեալ համարներով, պատահում է նոյնիսկ երեք ամսուանը մի գրքոյցում ամփոփուած... Նոյն անտարբերութեամը պէտք է բացատրել և խմբագիր պ. ի. Ռոստոմաշվիլու հերոսական աշխատութիւնը իւրաքանչիւր համարը կազմելիս, ամսագրի ծաւալի երեք քառորդը նաև է տանում իր թոյլ ուսերի վրայ՝ տալով բաղմազան յօդուածներ զիտութեան բոլորովին տարբեր ճիւղերից։ Այս տարուայ մի համարում՝ օրինակի համար՝ տպուած են նրա հետեւալ 4 ընդարձակ գրուածները. «Նոր ուղղութիւն անտեսազիտութեան մէջ», «Ծորենի մշակութեան ձեերը այլեալլ ազգերի մէջ», «Բնաւանի թուչուններ պահելու խելացի եղանակները», «Ի՞նչ է վիրաբուժութիւնը»։ Ճիշտ որ սրան կ'ասեն հազար կտոր լինել...

«Մոգղառուու» ներկայ տարուայ երկու միտոցեալ գրքոյկներում (№№ 1-4) կայ մի յօդուած նաև հայերի վերաբերեալ։ Նկարագրելով նուխու գաւառի գիւղերը և նրանց բնակիչների նիստուկացը, յօդուածագիր պ. Խնդիրո Զանաշվիլին (կեզծ անուն) երկար կանգ է առնում ուտիարնակ Վարդաչէն գիւղի վրայ և մի թունդ հաշիւ տեսնում իրան սաստիկ ատելի հայերի հետ։

Դա հէքիաթների և մարդատեցութեան վրայ հիմնուած մի անոյդ ամբաստանութիւն է փոստած ամբողջ 14 երեսների ընդարձակութեան վրայ։ Ամբաստանութեան ուղն ու ծուծը և հեղինակի հոգին համանալու համար բաւական է բերել նրա հետեւալ հաւատամբը։ «ամենքին յայտնի է, որ հայերի հետ միասին լինել, նրանց հետ դործ բռնել—չ'արժէ, որովհետեւ նըրանց ազահութեամբ և նախանձով լի սիրտը ոչ մի ժամանակ վրացուն բարիք չի ցանկայ, նրան օգուտ չի տայ»։

Դառնանք հիմա գործի էութեանը,—ինչպէս յայտնի է, Վարդաչէն գիւղում բնակում է անյայտ ծագումով՝ ուտիացի կոչուած՝ մի ժողովուրդ, որի մեծ մասը հայ-լուսաւորչական է, իսկ փոքրը—ուղղափառ։ Պ. Զանաշվիլին առանց մի բոպէ տատանուելու յայտարարում է, որ թէ այդ վարդաչէնցի և թէ առհասարակ բոլոր ուտիացիք ոչ այլ ոք են, բայց եթէ... զուտ վրացիք, որոնք ընկնելով խորամանկ հայերի ազգեցութեան տակ՝ հայադաւան են դարձել և ուրացել իրանց ազգութիւնը...»

Քալով վարդաշէնցիներին, նաև աշխատում է «հաստատ փաստերով» (այսինքն մեր յիշած հեղիաթիներով) ապացուցանել, որ իբր թէ հայ-լուսաւորչականները այդտեղ ներկայ դարում շարունակ խիել են կամ աշխատելիս են եղել խիել «վրացիներից» (ուղղափառ ուժիացիներից) մի շարք եկեղեցիներ, մատուռներ, գերեզմանատներ, ջրաղացներ ևայլն:

Մենք կը շատանանք՝ բերելով այստեղ յօդուածագրի յիշած «հաստատ փաստերից» միայն մէկը, այն էլ ամենախոշորը:

Փանական թւականներին Ղարադաղից գաղթած մի հայ՝ Մուրադեան ազգանունով՝ կառավարութիւնից իրաւունք է վերցնում «հայոց հին ձեկի» Եկեղեցի շինելու գիւղի ծայրում գտնուած մի շատ հին մատուռի աւերակների տեղում. Եկեղեցին կառուցւում է, և Մուրադեանը կամենում է տալ նրան «Եղիշէ առաքեալ» անունը. Սյդ բանը սակայն դուր չէ գալիս տեղի վրացի քահանայ Քարումիձէին, և նա մի խնդիր է տալիս Էկպարքոսին, որ այդ եկեղեցին «վրաց» սեփականութիւն դարձնել տայ: Ի՞նչ հիման վրայ: Այն հիման վրայ, հաւատացնում է մեզ պ. յօդուածագիրը, որ Մուրադեանը առաջուց ասած է լինում մի վրացի—հեղինակի այս տերմինը մենք գործ կածենք այսուհետեւ լոկ համառօտութեան համար—երեսփոխի, թէ իր ցանկութիւնն է, որ այդ նոր եկեղեցում հայերն էլ իրաւունք ունենան վրաց հետ միասին աղօթելու, իսկ եկեղեցին կարող է պատկանել վրաց... Մէկ էլ այն հիման վրայ, որ այդ աւերակներն այցելող ուխտաւորներից ուղղափառ քահանան փող է եղել ժողովելիս... Վրաստանի էկզարքոսի միջնորդութիւնը յարգելով՝ կառավարութիւնը դատ է նշանակում Նուխում: Կանչւում են իբրև վկայ վարդաշէնցի հայ, վրացի և թուրք բընակիչները: «Թուրքերը հաստացրած իրանց գրպանները հայի փողով վկայում են յօդուտ հայերի... հանդէս է գալիս կաշառքը, և գատաւորներն էլ անցնում են հայերի կողմը... Եկեղեցին ճանաչւում է հայոց սեփականութիւն»...

Չը նայելով այդ վճռին՝ վրացիք իրանց քահանայի հետ սովորութիւն են շինում տարին մի անգամ, Զատկի երրորդ օրը, մտնել Եղիշէ առաքեալը և այն օրուայ հասոյթին տիրանալ... «Հայերը մի քանի աարի թոյլ են տալիս նրանց անել այդ, ձայն չեն հանում»... Բայց գալիս է 1884 թիւը, և այդ թւականի Զատկին հայերը «լսելով մի ջահիլ, խռովարար վարդապետի խրատին», արգելում են նրանց օգտուելու եկեղեցու փողերից... Սկսում է սուրբուգմբոց, և «մի քանի շրմիոց էլ հասնում է խռովարար վարդապետին»... Հետեւալ տարին վրացիք նորից պատրաստում են իրանց քահանայի հետ ներս

խուժելու և կեղեցին, բայց «կոտրած դդալի պէս ամեն բանի մէջ խառնուող» ոստիկան (պրիվատ) Փ. Քութաթելաձէն (վրաստանցի վրացի) առաջուց արգելեց նրանց այդ բանը: «Այդպէս օգնող հանդիսացան ոստիկանական աստիճանաւորները հայերին և ստիպեցին վրացիներին ակամայ ձեռք քաշելու սրբավայրից»: Անցնում է դարձեալ մի քանի տարի: Գալիս է 1889 թւականը, երբ Վարդաշէնում քահանայ է կարգւում ... յօդուածագիրը (այսուղ անսպասելի հերպով յետ է քաշում դա իր զիմակը) ... «Այդ տարին, ասում է նա, ես տուի կառավարչակետ Դոնդուկով-Կորսակովին մի դօկլածնայ զապիսկա, որով խնդրում էի քննել Եղիշէ առաքեալի գործը և վերադարձնել այդ աղօթարանը ուղղափառներին»: Խնդիրը յարգւում է, և քննիչ է նշանակում նուխու գաւառապետի օգնական իշխան Անդրոնիկովը (վրաստանցի վրացի). ասկայն հայերը սկսեցին գրան սիրաշահել, ճաշեր սարքել, քաշեցին իրանց կողմը, և նա ոչ միայն գործը վճուեց յօդուած հայերի, այլև սկսեց մի ուրիշ նոր գործ»: Բանից գուրս է գալիս, որ այդ «հայերի պաշտպան» և «ինելօք քննիչ»—ինչպէս հեղնութեամբ անուանում է նըրան յօդուածագիրը—պաշտօնեան կասկած է յայտնում վրաց իրաւունքի մասին նրանց ձեռքում գտնուած Եղիա մարգարէի եկեղեցու վերաբերութեամբ, որը նոյնպէս մի ժամանակ վէճի առարկայ է եղել հայերի և վրաց մէջ...»

Սյա է անա բազմաչարչար Եղիշէ առաքեալի նշանաւոր պատմութիւնը...

Եւ կնքւում է այս պատմութիւնը՝ գուրս կորդելով մեր յօդուածագրի սրտի խորքից հետեւեալ յուղիչ խօսքերը. «Ապշութիւն է գալիս վրաս. գլուխս պատւում է, երբ ներկայացնում եմ ինձ մի կողմից հայերի եռանդն ու ջանքերը իրանց աղգայնութիւնն ուժեղացնելու գործում և միւսից—վրաց անյոգութիւնը. Վրացիք վանում են իրանցից նոյնիսկ նրանց, ուրո՞ք խոստովանում են իրանց վրացի ծագումը և կամենում են միանալ նրանց հետ, իսկ հայերը մոռացնել են տալիս իրանց կրօնն ընդունած ուտիացիների որդոց՝ նրանց մայրենի լեզուն և փոխարէնը հայերէն սովորացնում»...

---

Վրաց լրագրութեան մէջ շատ յաճախ է պատահում կարդալ այն անյաձոյ ընդհարութիւնը, որ ունենում են գիւղական քահանաները իրանց ծխերի հետ՝ «գրամա» կոչուած առւրբը պահանջելիս: Դրամայի գոյութիւնը Վրաստանում շատ էին է, իսկ պաշտօնապէս վաւերացրաւած է նա 1818 թւին՝ էկ-

զարքոս թէոփիլակտի միջնորդութեամբ։ Այդ օրէնքի ոյժ ունեցող տուրքը մինչև օրս էլ մնացել է անփոփոխ, և նրա համաձայն իւրաքանչիւր գիւղական ծուխ (տուն) պարտաւոր է տալ իր քահանային մի կոդ (4—5 պուդ) ցորեն, կէս կոդ զարի, մի թռոնդի (մի երրորդական վերբօ) գինի, երկու հաւ և 20 կոսէկ փող։ Բայց աղքատ գիւղացիք մեծ դժոխութեամբ են տալիս իրանց վրայ դրուած պարտքը և յաճախ էլ հրաժարւում են վճարելու այս Եւ ահա այդտեղ ըստեղծւում են մի շարք այնպիսի յաւալի հանգամանքներ, որոնք բոլորովին նսեմացնում են հոգեսր հոփուի բարձր կոչումը և սամսութիւն, նոյնիսկ թշնամութիւն առաջացնում նրա և ժողովրդի մէջ։ «Եւ ինչ բարոյական աղդեցութիւն պէտք է ունենայ իր ժողովրդի վրայ այն քահանան—ասում է՝ «Ցնորիսափուրցելի» լրագիրը (№ 2197)—որը սահպուած է՝ ջուալներն ու չանախը ձեռքին կանգնելու գիւղացու զլիխին ու իր դրաման պահանջելու, նրանից զոռով խելու, որովհետեւ նա իր կամքով չէ տալիս այն՝ առաջ բերելով գլխաւորապէս իր չըքաւորութիւնը։ Քահանան դիմում է յաճախ նաև պոլիցիայի օգնութեան, իսկ երբ այդ միջոցն էլ չէ օգնում, նա աշխատում է վրայ համսերը գիւղացուն գործի այնպիսի յարմար ժամանակ, երբ նա այլևս անկարող է լինում բացասել նրա պահանջը։ Եւ այդ բոլորը սահպուած է լինում անելու քահանան իր չափազանց աղքատութեան պատճառով։ Նա պատերազմում է տարին տասներկու ամիս իր ծխերի հետ դրամայի պատճառով։»

Դրաման հաւաքելու այդ նուաստացնող հանգամանքների մասին մանրամասն խօսակցութիւն եղաւ մօտերս (յունիսի 15—18) Գորի քաղաքում կայացած վրաց գաւառական հոգեորականութեան ներկայացուցիչների ժողովում։ Ժողովը որոշեց վերածել նախ և առաջ պաշարեղէնի այդ տուրքը զուտ դրամի, սահմանելով իւրաքանչիւր ծխի համար երեքական բուրլի և ապա էկզարքոսի միջոցով միջնորդել կառավարութեան առաջ, որ այդ տուրքը հաւաքուի քաղաքական վարչութեան (աղմինիստրացիայի) ձեռքով և յանձնուի յետոյ հոգեորականութեան։

Նոյնանման փորձ արել էր արդէն սրանից մի քանի տարի առաջ իմերեթի համար հանգուցեալ անուանի Գարրիէլ եպիսկոպոսը և յաջողութիւն գտել այնպէս որ դրամա հաւաքելու նախին ձեր մնացել է մինչև օրս միայն բուն Վրաստանի մէջ։ Միայն տուրքի չափը իմերեթի ծխերի համար սահմանուած է տառեկան երկուական բուրլի։

Սրանից երկու տարի առաջ մեր ընթերցողներին մանրա-  
մասն տեղիկութիւններ ենք տուել Թիֆլիսում գոյութիւն ու-  
նեցող վրաց «գրագիտութիւն տարածող ընկերութեան» մասին։  
Այդ ընկերութեան զրամական շրջանառութիւնը տարէցտարի  
մեծանում է, գործունէութիւնը ընդլայնում; տուած օգուտնե-  
րը կրկնապատկում: Դա մի կենարոն է, որ կապում է իր հետ  
կովկասի բոլոր վրացիներին։ Նա իրաւունք ունի գործելու ա-  
մեն տեղեւ անդամներ ու ծառայութիւններ ընդունելու ամեն  
տեղից։ Նրա պահած 8 ուսումնարաններն ու 11 գրադարան-  
ընթերցարանները ցրուած են Վրաստանի բոլոր ծայրերում,  
նրա հրատարակած տասնեակ հազարաւոր գրքերը մուտք են  
դորձում ու կարգացում հարիւրաւոր զիւղերում։ Զը հաշւե-  
լով դասագրքերը՝ նա տպել է անցեալ տարի—ինչպէս այդ ի-  
մացում է նորերս հրատարակուած հաշւից—8 ժողովրդական  
գիրք, իսկ ապագայի համար ծրագրում է մի ամբողջ սերիա դոյ-  
նանման գրքերի։ Հաշւետութեան տարին ընկերութիւնն ու-  
նեցել է 19,715 բուրլի նկամուտ, այսինքն ճիշտ 2 անգամ ա-  
ւելի, քան ունէր տասը տարի սրանից առաջ։ Նոյն տարին ան-  
դամագնար ստացուել է 2903 բուրլի, մինչդեռ 1900 թւին ըս-  
տացուել էր միայն 777 բուրլի։ Թիֆլիսում նա պահում է իր  
սեփական գրավաճառանոցը, թանգարանը, լուսանկարչանոցը և  
այլն։ Հաշւետութեան տարին ուսումնարաններ պահելու վր-  
այ ծախսուել է 13,508։ Ներկայ տարուանից նրանց համար  
նշանակում է նոյնպէս առանձին ոռնկով մի վերահսկող և  
քննիչ, որին պէտք է յանձնուի նաև գաւաններում ընկերութեան  
հրատարակութիւնների ծաւալելու կազմակերպութիւնը։ Աւելի  
թուվ անդամներ զրաւելու համար ընկերութիւնն այս տարի  
տպում է անմիջապէս դրանց անունները լրացիրներում՝ ան-  
դամագնարներն ստանալուն պէս։

Եկող տարուայ մայիսին լրանում է ընկերութրան 25. ա-  
մեակը, և նրա վարչութիւնն արդէն ձևոք է զարկել պատրաս-  
տելու այդ ժամանակի համար և առանձին զբոյզկով տպելու  
այդ պատկառելի հիմնարկութեան պատմութիւնը։

---

Ինչպէս յայտնի է, մի ժամանակ վրաց մամուլի և հասա-  
րակութեան նշանաւոր մասը շատ էին սիրում «Հավկազ»-ի  
նախկին խմբագիր և բանաստեղծ Վ. Լ. Վելիչկօին։ Նրանք  
յափշտակութեամբ ականջ էին գնում նրա քաղցր, մեղրածոր  
խօսքերին և մեծամեծ բարիքներ սպասում նրանից իրանց հայ-  
րենիքի ապագայի համար։ Այդ կարծեցեալ բարեկամը այսքան

էր շամեցրել, խելքահան արել նրանց իր անհատնում խոստում-ներով ու շողոքորթութիւններով, որ նրանք կատարեալ ան-տարբերութիւն էին ցոյց տալիս և յաճախ նոյնիսկ ուրախանում էին, երբ իրանց այդ սիրելի մարդը մի անպատի, զղուելի գեր էր կատարում Կովկասի մի ուրիշ մեծ ազգի վերաբերութեամբ... Սակայն անցաւ ժամանակ, և հանգամանքները փոխուեցին Հաստատուելով Պետերբուրգում Վելիչկօն վար առաւ դիմակը և իր մի շարք գրուածներով ու դասախոսութիւններով ապացուցեց, որ իրան նոյնքան օտար են ու ատելի վրացիք, որքան և հայերը... Երգուեանների գատարանը, զեմստիօն և այլ ազատամիտ հիմնարկութիւնները հրատարակուեցին վաղաժամ Վրաստանի համար, վրացիք ճանաչուեցին «գոյութիւն ստացած իրանց ծնողների հարբած ժամանակ», վրացիք «անհանգիստ» աղնւականներին խելքի բերելու համար առաջարկուեց, որ նըրանցից զօրքեր կազմուեն և ուղարկուեն Ռուսաստանի հեռաւոր սահմանները՝ օրինակ Մանջուրիայի կողմերը՝ պաշտպանելու համար ևայլն: Եւ այդ բոլորը գուրս էր գալիս այդ վալիս այդ վաղեմի անփոխարինելի բարեկամի ու պաշտպանի խելապատճիբ...

Բայց այժմ արդէն թէպէտ և ուշ՝ նա լիուլի կերպով վայելում է վրաց ազգի ու մամուլի մեծամանութեան ատելութիւնը: «Պ. Վելիչկօն—ասում է «Յնորիս-Փուրցելին» (№ 2188)—վարուեց մեզ հետ, ինչպէս վարւում են փողոցի լկտի ու փչացած կանանց հետ, դէպի որոնք մարդիկ ոչ մի յարգանք չեն տածում: Նա չէր խոստովանում մեր մէջ ոչ մի արժանաւորութիւն, խօսում էր մեզ հետ, ողորմութիւն էր խոստանում մեզ և ձեռք մեկնում մեզ՝ ոչ որպէս իր հաւասար մարդկանց... Եւ մենք յափշտակուած նայում էինք նրան: Շատ թշուառացած պէտք է լինի մարդու, երբ նա յաղթւում է այդպիսիների կեղծաւորութիւնից ու փարիսեցիութիւնից և ծունդ ծալում նրանց առաջ»:

Նոյն լրագրի մի ուրիշ համարում (2185) նրա մշտական աշխատակից պ. Լ. Ղ. ուղղում է «վրաց կեղծաւոր բարեկամին» ի դիմաց հասարակաց կարծիքի՝ հետեւեալ սրտայոց խօսքերը. «Միրաս ցաւում է մատաբերելով, որ դու քո մշուշապատ ֆրազներով և սուտ-բարեկամական շատախօսութեամբ կապում էիր մեր աչքերը՝ ծառայելով ինքդ բոլորովին ուրիշ գործի: Ցաւում եմ, որ գոնէ մի առժամանակ շատ վրացիք հաւատացին քո խօսքերին և այնքան հաւատով ու յուսալից նայում էին աչքերիդ: Բայց այժմ մեր սրտում, ճիշտ այնտեղում, որ տեղ դու խարէութեամբ ու գողնովի ներս պրծար և պատկերդ

դրոշմեցիր,—մենք հաստատում կերպով կը զբենք. «Այստեղ մի ժամանակ բնակւում էր ջամբազ (լարախաղաց) Վասիլիյ Վելիչկոն, որ աշքակապութեամբ էր պարագում և հաւատացնում, թէ ինքը վրաց բարեկամ է»: Բացի դրանից՝ ջերմ սրտով ցանկանում ենք որ քո չար հոգին և կեղծ միտքը մի օր խաղաղութեան արժանանան»:

Համաձայն ենք: Մենք էլ մաղթում ենք նոյնը, միայն չենք կարող չը ցաւել, որ դեռևս ըոլոր վրացիք չեն ջնջել իրանց սրտից այդ «չար հոգու» պատկերը: Այդպիսիներից է՝ օրինակ՝ վրաց միւս—«իւերիա» լրագիրը, որը թէն նոյնպէս վատ կարծիք ունի այժմ Վելիչկոի մասին, բայց և այնպէս մի առանձին բաւականութիւն զգաց: Երբ լսեց թիֆլում մօտերս ստացուած սիսալ լուրը նրա՝ «С. Պетерб. Въдомости» լրագրի խմբագիր դառնալու մասին...

Վերջին ժամանակներս վրաց ինտելիգենցիան շատ է զբաղւում ազգային ֆոլկլորի, ժողովրդական բանաւոր գրականութեան գրի անցնելու գործով: Բաւական է յիշել միայն ներկայ յունիս ամսում արածները: Թիֆլիսի մի համեստ գրավաճառ իմերաշվիլի ազգանունով տպեց ամսի սկզբին մի բաց նամակ լրագիրներում, որով առաջարկում էր զիւղական ուսուցիչներին հաւաքել հեքիաթներ, գաւառական բառեր, առակներ, առածներ և այլն և ուղարկել իրան՝ առանձին ժողովածուներ կազմելու և տպագրելու համար: Այդ հում նիւթեր ուղարկողներին պ. Իմերաշվիլին խոստանում է առայժմ՝ վճարել 3—18 ոռուբու գրքեր՝ համեմատ նրանց ձեռագիրների մեծութեան: Ուրեմն ապագայում նա միաք ունի վճարելու աւելի լաւ և դրամով: Նոյն ամսի 20-ին «Վրաց մէջ զբագիտութիւն տարածող ընկերութեան վարչութիւնը մի յատուկ նիստ ունեցաւ այդ հարցին նուիրած, որտեղ որոշուեց հիմնել ֆոլկլորային հրատարակութիւնների մշտական սերիա՝ որոշ գիտնական սիստեմով: Նոյն նիստում առանձին վարձով յանձնարարուեց պ. Զ. Բիլանաշվիլուն փնտրել և արտադրել վրաց մամուլում մինչեւ օրս տպուած ժողովրդական գրականութեան վերաբերեալ բոլոր նիւթերը: Վարձատրութիւն կը ստանան նաև բոլոր այն անձինք, որոնք կը զբաղուեն այսուհետեւ նոր, անտարի նիւթեր հաւաքելով և ընկերութեանը հասցնելով: Նոյն ամսի վերջին այդ ընկերութիւնից նպաստ ստացաւ երիտասարդ երաժշտագէտ պ. Զ. Պալիելը, որպէսդի գնա Սվանէթ՝ (Քութայիսի նահանգումն է) տեղական ժողովրդական երգերը ձայ-

նազրելու։ Վերջապէս միևնոյն յունիս ամսի ընթացքում թիֆ-  
լիսում մշակուեց ու կառավարութեան յանձնուեց վրաց մի նոր  
ընկերութեան ծրագիր, որի նպատակն է ազգային երգեր ժո-  
ղովել, նրանց վրայ ուսումնասիրութիւններ հրատարակել, եր-  
գիչների խմբեր պահել, երաժշտութեան ընդունակութիւն ու-  
նեցողներին նպաստ տալ կատարելազործուելու ևայլն։ Նոր  
ընկերութեան հիմնադիր անդամների թիւը հասել է վաթ-  
ուունի։

Մօտերս մեր ձեռքը հասաւ վրաց կեանքում անսովոր մե-  
ծութեան մի գիրք, որ հրատարակուել է սրանից մի քանի ա-  
միս առաջ։ Նա բաղկացած է 844 մանրատառ և մեծադիր ու 8  
երեսներից և կրում է «կաթոլիկութեան պատմութիւնը վրաց  
մէջ» վերնագիրը։ Նրա հեղինակ պատեր Միքէլ Թամարաշվի-  
լին, ինչպէս ասում է ինքը առաջաբանում, դեգերել է մի քա-  
նի տարի Խոտլիայի և ուրիշ եւրոպական երկիրների արխիւ-  
ներում և գտել «ամերքելի փաստեր, գոկումնաներ, որոնցով  
ապացուցանուում է վրացի-կաթոլիկների դոյութիւնը դարերի  
ընթացքում»։ Պատմութիւնը սկսւում է 13-րդ դարից և հաս-  
նում է 19-րդ դարի կէսը։ Երբ մեզ յաջողուի այդ գիրքը ամ-  
բողջովին կարդալու, կ'աշխատենք մի հաշիւ տալ նրա մասին  
մեր ընթերցողներին։

S. ՓԻՐՈՒՄԵԱՆ